ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2025 թվականի կարիքների համար միջոցառումների հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2025/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «05» հունիսի 2025թ.

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Մարիամ Մարգարյանը՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության բարձր տեխնոլոգիաների վարչության էկոհամակարգի զարգացման բաժնի պետ, վարչության պետի պարտականությունները կատարող

Անդամներ՝

Ալվարդ Վարդանյանը՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության բարձր տեխնոլոգիաների վարչության էկոհամակարգի զարգացման բաժնի գլխավոր մասնագետ

Մոնիկա Մաթևոսյանը՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության բարձր տեխնոլոգիաների վարչության նորարարության խթանման բաժնի գլխավոր մասնագետ

Վահագն Ստեփանյանը՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ծրագրերի վարչության գլխավոր մասնագետ

Քարտուղար՝

Գոռ Եսայանը՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2025/03» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 02.06.2025թ. ժամը 11:00-ն,

1.2 էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 03.06.2025 թ., ժամը 11:00-ին:

1.3 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնի վերաբերյալ.

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	Ապրանքի անվանումը	Նախահաշվային գին
1	միջոցառումների հետ կապված ծառայություններ	36,000,000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն
1	ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ	gevorgianconcern@gmail.com
2	ՏԵԽՊՐՈՖՇԻՆ ՍՊԸ	techprofshin@gmail.com

4.«ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2025/03» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հակադարձ աճուրդի արդյունքները ներկայացված են կից ֆայլով:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6. Տվյալներ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

7. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով՝ հանձնաժողովը որոշեց. ընտրված մասնակից հայտարարել ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ -ին:

8. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր, այնուհետև պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակցին:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ **Մ. Մարգարյան**

Անդամներ՝ _____ **Ա. Վարդանյան**

_____ **Մ. Մաթևոսյան**

_____ **Վ. Ստեփանյան**

Քարտուղար՝ _____ **Գ. Եսայան**